քից խուսափելու համար Ուտիացիների նախնիքները սկսում էին ծածկել թանձր քողով բոլոր օրիորդների և նորատի հարսների երեսները՝ որպէս համեստութեան և ամօթխածութեան նշան։

Երկրորդ՝ սկսում էին նշանադրել երկսեռ մանուկներին նոյնիսկ օրօրոցում, որի նշանը լինում էր «բէշիքերթմա», այսինքն՝ օրօրոցի վերևի գլանաձև փայտի վրա խազ քաշել կամ կախել արծաթէ մի փոքր դրամ (20 կոպ.)։ Հարսնացու աղջիկն ու տղան երբոր դառնում էին 9—10 տարեկան, պսակում էին նրանց, որպէս զի մատաղահաս կոյս աղջիկներին կարողանան փրկել տրուփոտ պարսկական խաների և գաղանաբարոյ բէկերի ըռնի յափշտակութիւններից։ Ի դէպ է ասել, որ տողերիս գրողի մայրը լինելով գեղանի աղջիկ և ինքն էլ նշանաւոր հարուստի զաւակ, հօրս մայրը պսակել է տալիս իւր 12 տարեկան որդուն 9 տարեկան գեղանի Մարիամի հետ և երեք տարի իւր ծոցում պահելուց յետոյ միայն յանձնում է իւր 12 ամեայ հարսին 15 տարեկան որդուն։ Որոնցից սերուում են 15 տղայ և մի աղջիկ։ Ռուսաց տիրապետութիւնից յետոյ բռնակալ խաների մոցրած սովորութիւններն ու կարգերը թէև անդարձ կորան, բայց «բէշիկքերթմա»— օրօրոցի վրայ խազ քաշելու վատ սովորութիւնը և անչափահաս երեխաներին պսակելու վայրենի աւանդութիւնը, տարաբախտաբար, մինչև ցարդ մնացել են անփոփոխ եւ անկորուստ։

Ուտիացոց աշխարհի Հայ ժողովրդի ջնջման և ինքնասպանութեան գլխաւոր պատճառներից մինն